Ազգ
Azg
8 ՄԱՐՏ 2013 ՈՒՐԲԱԹ 34(5117)
ISSN: 1829-1651

# Երեւանի ավագանու ընտրությունները՝ մի նոր փորձաքար իշխող մեծամասնության համար

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Երեկ տեղի ունեցած ՀՀԿ գործադիր մարմնի նիստում քննարկվել եւ հաստատվել են Երեւանի ավագանու ընտրություններում ՀՀԿ համամասնական ցուցակի երկրորդ եւ երրորդ հորիզոնականները զբաղեցնողների թեկնածությունները՝ միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյան եւ ճարտարագիտական համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյան: Ըստ ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովի, ցուցակի մնացած անդամների անունները դեռ չեն հստակեցվել, ամբողջական ցուցակը պարզ կլինի օրենքով սահմանված ժամկետներում (մանրամասները՝ տես այս էջում «ՀՀԿ գործադիր մարմնի նիստը» նյութում): Ավելի վաղ հայտնի էր, որ ցուցակը գլխավորելու է ներկա քաղաքապետ Տարոն Մարգարյանը:**

**Այսպիսով՝ մայիսի 5-ի ընտրությունները սպառնում են մի նոր փորձաքար դառնալ իշխող մեծամասնության համար, քանի որ ընդդիմադիր շրջանակներում մտմտուքներ կան Երեւանը ղեկավարելու համար պայքարել միասնական ցուցակով: Ընդդիմադիրների՝ այս ընտրություններին միասնական ձեւաչափով մասնակցելու հնարավորության մասին ԱԺ ճեպազրույցներում անցած շաբաթ կարծիք էր հայտնել ՀՅԴ ներկայացուցիչը, համենայն դեպս՝ իր կուսակցությունում եղած կարծիքների մասով, դա ցանկալի համարելով: Սակայն այդ հարցի վերաբերյալ քննարկումներ դեռ չեն եղել, ուղղակի ցանկությունների տեսքով այդ տեսակ գաղափար առաջարկում է նաեւ ՀԱԿ-ից Լեւոն Զուրաբյանը, «Ժառանգությունից» կարծես նույնպես դեմ չեն գաղափարին: ԲՀԿ-ն դեռ ընդհանրապես քննարկում է ավագանու ընտրություններին մասնակցելու իր ձեւաչափը: Նկատի առնենք, որ միասնական հանդես գալու գաղափարը հայ ընդդիմադիրների համար միշտ էլ դժվարորոշելի խնդիր է եղել՝ յուրաքանչյուրի սեփական ամբիցիաների անհաղթահարելիության պատճառով: Սակայն այժմ այդ գաղափարն առավել հետաքրքրական է դառնում այն իմաստով, որ նախագահական ընտրություններից հետո եղած տրամադրությունների պարագայում դա կարող է նշանակել իրական դիմակայություն՝ հանդեպ իշխող կուսակցությունը՝ հեռագնա անդրադարձների պատճառ դառնալով:**



Տես էջ 2

# Ծաղիկները ձեռքերիս ու գրպաններս դատարկ...

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Քաղաքի տղամարդիկ գյուղի տղամարդկանցից իհարկե տարբերվում են. օրինակ՝ վերջիններս, եթե անգամ որեւէ աշխատանք չլինի, տնամերձ հողամասում ինչ-որ բան կանեն, մինչդեռ քաղաքաբնակներս աշխատանքի բացակայության պայմաններում պարզապես զբոսնում ենք, բայց ոչ թե երջանիկ մարդու անհոգությամբ, այլ խիստ նյարդային դեմքի արտահայտությամբ: Ամեն տարվա մարտի 8-ին, եթե նկատել եք, քաղաքում շատանում են այդպիսի դեմքերով տղամարդիկ, գյուղերում էլ, ի դեպ, շատանում են տնամերձ հողամասերում ըստ էության ոչինչ չանող, բայց աշխատող տղամարդիկ: Գաղտնիքը տղամարդկանց հիմնական առաքելության կատարման համար ունեցած հնարավորությունների բացակայությունն է: Գյուղերում էլ, քաղաքներում էլ այսօր տղամարդիկ չեն կարողանում գումար աշխատել՝ մեկ, չեն կարողանում իրենց կանանց երջանկացնել՝ երկու, կամ՝ հետեւաբար: Իհարկե ոչ բոլորը, ոմանք, շատերը...



Օրինակ՝ քանաքեռցի Գեւորգը հիմնական աշխատանք չունի, բայց ամուսնացած է, երբեմն տաքսի է վարում, կինն էլ աշխատում է քաղաքի ծաղկի խանութներից մեկում. հենց այս կնոջ մասին կխոսենք: Տաթեւիկը երբեք տուն ծաղիկ չի բերում: Ճիշտ է, նա սիրում է իր աշխատանքը, բայց երբ անգամ ծաղիկներն՝ իրենց շենշող բույրով դառնում են աշխատանք, չես ցանկանում այդ աշխատանքը տուն բերել: Ասել, թե Տաթեւիկը հոգնում է, նշանակում է ոչինչ չասել: Բայց նա այլընտրանք չունի, ընդ որում, նա իր դժվարին, ծանր աշխատանքի համար ոչ մեկին չի մեղադրում, նա պարզապես հասկանում է, ապրելու համար աշխատել է պետք, այո, ծանր, դժվարությամբ...

Մարտի 7-ի երեկոյան Տաթեւիկն արդեն պատրաստել էր մի քանի տասնյակ ծաղկեփնջեր (պահանջարկ կլիներ հաստատ), ու երբ նա վերջին սրբագրումներն էր անում կակաչների ու վարդերի միացյալ փնջի վրա, խանութ մտավ մի երիտասարդ, նա շփոթված էր: Չնայած աշխատանքային ծանրաբեռնվածությանը՝ Տաթեւիկն զգաց տղայի հուզմունքն ու անհանգստությունը եւ հետաքրքրվեց, թե ինչո՞վ կարող է օգնել նրան: Երիտասարդն ասաց, որ իրեն փունջ է պետք ու ցույց տվեց մեկը: Տաթեւիկը ժպտաց, այդ փունջն ամենաթանկն էր խանութում, իմանալով՝ տղան ավելի հուզվեց:

Տես էջ 3

# Երբ նախ պատիվն են կորցնում

## *Երեւան-Վան-Երեւան թռիչքի առթիվ*

Vesti.az-ը մի ողբաձայն-լալահառաչ-աղերսական նյութ է հրապարակել, որի «մեխն» այն է, թե «ապրիլի 3-ին թուրքերն Ադրբեջանին կզոհաբերեն Հայաստանին»: Առաջին պահի կարելի է տպավորություն ստանալ, որ Անկարան պատրաստվում է առաջինը ճանաչել Արցախի անկախությունը կամ մտադիր է ապաշխարել Թուրքիայում 1915թ.-ին իրականացված ցեղասպանության համար, կամ առնվազն հայտարարելու է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ սահմանի բացման մտադրության մասին:

Իրականում խոսքը ապրիլի 3-ին կայանալիք Երեւան-Վան-Երեւան առաջին թռիչքի մասին է: Թռիչք, որի հաջողության դեպքում կիրականացվի շաբաթն ընդամենը երկու անգամ, այն էլ՝ զուտ զբոսաշրջային նպատակով: Ճիշտ է, թուրքական եւ հայաստանյան կողմից պայմանավորվածությունները ձեռք են բերվել ոչ կառավարական կառույցների միջեւ, բայց հասկանալի է, որ երկու երկրների բարձրագույն ղեկավարության համարժեք վերաբերմունքի բացակայության դեպքում խնդրի լուծումն այդքան չէր մոտենա:

Այդ կերպ թուրքական կողմը հնարավորություն է ստեղծում, որ Հայաստանի քաղաքացիները կարողանան այցելել Վան՝ ծախսելով ընդամենը 40 րոպե: Եվ հենց դա էլ ադրբեջանական կողմին թվում է իրենց «զոհաբերել Հայաստանին»: Ավելի վաղ մի աղմուկ էլ բարձրացվել էր Սերժ Սարգսյանին հղած Գյուլի շնորհավորական ուղերձի կապակցությամբ: Մինչեւ Անկարայից չհասկացրին, որ չարժե ընկնել ծիծաղելի վիճակի մեջ, պետության ղեկավարին ընտրվելու առթիվ շնորհավորանք հղելը «մտնում է թուրքական պետության ավանդույթների մեջ»:

«Ամեն ինչ կորսված է, պատվից բացի»,- այս արտահայտությունը վերագրվում է Ֆրանսիայի Ֆրանցիսկ թագավորին: Դրանով նա բնութագրել է իրեն՝ իսպանացիների դեմ պատերազմում կրած ծանր պարտությունից հետո մորը հղած նամակում:

Այս դեպքում ադրբեջանական կողմը նախապես պատիվն է կորցրել: Քանի որ ամեն անգամ կախվում է «մեծ եղբայր» Թուրքիայի «փեշերից», նայում աղերսախառը եւ աղաչում, որ «չբարելավի Հայաստանի հետ հարաբերությունները»: Եվ չեն թաքցնում, որ Թուրքիայից «ավելին են ակնկալում, քան միայն համերաշխություն»: Այսինքն ուզում են, որ Թուրքիան դադարի ինքնիշխան երկիր լինելուց եւ ենթարկվի Ադրբեջանի «հարձակողական արտաքին քաղաքականությա՞նը»:

Ըստ երեւույթին, Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերություններում ինչ-որ բան այն չէ: Հակառակ դեպքում մի օդանավային երթուղու բացման մասին դեռեւս նախնական տեղեկատվությունը Բաքվի լրատվամիջոցներում «ողբալաց» չէր սադրի:

Վ. Ա.

# ՀՀԿ գործադիր մարմնի նիստում

**Երեկ ՀՀԿ գործադիր մարմնի նիստից հետո ՀՀԿ մամուլի խոսնակ <u>Էդուարդ Շարմազանովը</u> տեղեկացրեց Երեւանի ավագանու ընտրություններում ՀՀԿ համամասնական ցուցակի միայն երեք անունների մասին փաստորեն՝ Տարոն Մարգարյան, Սմբատ Լպուտյան, Հովհաննես Թոքմաջյան: Հնարավո՞ր է արդյոք ՀՀԿ համամասնական ցուցակի վերանայում՝ ընդդիմության միասնական համամասնական ցուցակով հանդես գալու դեպքում: Ըստ Շարմազանովի՝ համենայնդեպս ՀՀԿ ցուցակի առաջին երեք հորիզոնականներ զբաղեցնողների անուններն այլեւս փոփոխություն չեն կրի: Երեւանի ավագանու ընտրություններում ընդդիմության միասնական հանդես գալու հնարավորության մասին Է. Շարմազանովը նշեց.«Առաջին անգամ չէ, որ մեծ մասը միավորվում է Հանրապետականի դեմ, բայց Հանրապետականը կողմ է քաղաքական մրցակցությանը, եւ մենք ազատ-արդար պայքարի կողմնակիցներ ենք: Դա իրենց ներքին խնդիրն է՝ ով ում հետ կմիավորվի, մենք որեւէ մեկի դեմ չենք միավորվում, մենք այս ընտրություններին եւ բոլոր ընտրություններին գնալու ենք հանուն գաղափարի, որպեսզի ավելի լավ քաղաք ունենանք մի քանի տարի անց», ասաց նա:**

**Անդրադառնալով Րաֆֆի Հովհաննիսյանի կողմից ներկայացվող հետընտրական պահանջներին՝ Է. Շարմազանովը նկատեց, թե պետք է զերծ մնալ բոլշեւիկյան մոտեցումներից եւ դրանք չուղղել դեպի ընդդիմությունը, քանի որ բոլոր երկրներում էլ ընդդիմությունը քննադատում է իշխանությանը: Իսկ Րաֆֆու ընդդիմությունը ինքն էլ չգիտե, թե ինչ է ուզում, որովհետեւ ռազմավարություն չի մշակել: Եթե Րաֆֆու խորհրդարանական խմբակցությունը առաջարկում է մի բան, ինքն՝ այլ բան, էլ ինչի մասին է խոսքը: Շարմազանովի կարծիքով ընդդիմությունը պետք է ավելի հստակեցնի մոտեցումները, որ կարողանա մասնակցել ավագանու ընտրություններին: Նա խոսեց նաեւ այն մասին, որ նորմալ երկրում պարտված ընդդիմությունը շնորհավորում է հաղթող նախագահին, բայց մեզ մոտ եթե այդպիսի բան տեղի ունենա, շնորհավորողին բազմաթիվ պիտակներ են կպցնեն: Խնդիրը Սահմանադրական դատարանում է, այնպես որ Է. Շարմազանովը չուզեց շատ մեկնաբանել ընդդիմության պահանջները.«Որպես օրինապահ քաղաքացիներ պետք է սպասել ՍԴ որոշմանը եւ դա ընդունել՝ անկախ նրանից դուր կգա, թե՞ դուր չի գա, սա է ճանապարհը», ասաց նա:**

Ս. Խ.

# Թուրքիան խախտում է ՄԱԿ-ի կանոնադրությունը

«Միավորում հանուն ՄԱԿ-ի կանոնադրության» խումբը, որը կազմված է հայաստանյան շուրջ 15 հասարակական կազմակերպություններից, նոր նամակ է ուղարկել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի Մունին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչներին՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տարածաշրջանային զարգացման ծրագրերի (ՏԶԾ) գրասենյակը Բրատիսլավայից Ստամբուլ տեղափոխելու հարցի կապակցությամբ: Սակայն նամակի պատասխանը դեռեւս չեն ստացել:

«Միավորում հանուն ՄԱԿ-ի կանոնադրության» խմբի անդամ, բնապահպան **<u>Կարինե Դանիելյանը</u>**, որը երեկ «Հայելի» ակումբում գրասենյակի հնարավոր տեղափոխման վերաբերյալ իր անհամաձայնությունը հայտնելուց հետո նշեց, որ աստիճանաբար Թուրքիա են տեղափոխվում ՄԱԿ-ի տարբեր ծրագրեր, եւ դրա համար Թուրքիան մեծ գումարներ է տրամադրում ՄԱԿ-ին: Ըստ էության ստացվում է, որ Հայաստանն իր շփումները ՄԱԿ-ի հետ ստիպված է իրականացնել Թուրքիայի միջոցով: Կարինե Դանիելյանը ընդգծեց, որ անկախ ամեն ինչից՝ գրասենյակի տեղափոխման դեմ իրենց խումբը շարունակելու է պայքարել, եւ խմբի ներկայացուցիչը հիմա փորձում է հանդիպել ՄԱԿ-ի ներկայացուցիչներին:

Գրասենյակի տեղափոխման դեմ իրենց բողոքն արդեն հայտնել են Հայաստանը, Հունաստանն ու Կիպրոսը:

Թուրքիայի կողմից ՄԱԿ-ի Եվրոպայի ՏԶԾ գրասենյակի Ստամբուլ տեղափոխումը նախամտածված քայլ է, եւ պատահական չէ, որ արվում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ:

ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպան **Լարիսա Ալավերդյանը** նշում է, որ Ցեղասպանության 100-ամյա տարելիցին պատրաստվում ենք ոչ միայն մենք, այլեւ Թուրքիան ու Ադրբեջանը, եւ ՏԶԾ գրասենյակի տեղափոխումը Ստամբուլ այդ պատրաստությունների շարքից է եւ նպատակ ունի Հայաստանի համար խոչընդոտներ ստեղծել: «Եվ ստացվում է այնպես, որ նախաձեռնությունն իր ձեռքը կարողանում է վերցնել այն պետությունը, որը շատ փող ունի, այնինչ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ասված է, որ մեծ ու փոքր պետությունների միջեւ տարբերակում դնել պետք չէ: Հետեւաբար մենք պահանջում ենք ՄԱԿ-ի կանոնադրության մեջ գրված արժեքների պահպանում», հավելում է Լարիսա Ալավերդյանը:

Ի. Պ.

ԱԶԳ

# Ընթացիկ

## Իրակլի Ալասանիա. Քաղաքացիական օդանավեր կործանելու սպառնալիքներն անընդունելի են


ARMENPRESS

Պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան երեկ պաշտպանության նախարարությունում էր: Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո տեղի ունեցավ առանձնազրույց Հայաստանի եւ Վրաստանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների միջեւ:

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի խոսքերով՝ հանդիպմանն անդրադարձել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող եւ տարածաշրջանային անվտանգության խնդիրներին: «Մենք միակարծիք ենք տարածաշրջանային անվտանգության ապահովման եւ հակամարտությունների լուծման հարցում: Տարածաշրջանային անվտանգության խնդիրները տարածաշրջանային բոլոր երկրների համար անչափ կարեւոր են եւ պետք է լուծվեն միմիայն փոխադարձ հասկացողության, երկխոսության եւ խաղաղ բանակցությունների գործընթացով», ասաց Օհանյանը՝ շեշտելով, որ այս տարվա համար որոշվել են երկկողմ համագործակցության ուղղությունները՝ ռազմական կրթություն եւ ուսուցում, խաղաղապահություն, ռազմավարական բարեփոխումներ:

Իրակլի Ալասանիայի գնահատմամբ՝ Հայաստանն ու Վրաստանը ոչ միայն հարեւաններ են, այլեւ՝ բարեկամներ: «Մեր պատմական բարեկամությունը պարտադրում է, որ մենք իրավունք չունենք այլ կերպ ապրելու, եթե ոչ շարունակել բարիդրացիական հարաբերություններ ապահովելը», ասաց նա՝ հավելելով, որ Երեւանում կայացած հանդիպմանը համաձայնություն է ձեռք բերվել համատեղ զորավարժությունների անցկացման վերաբերյալ: Վրաստանի պաշտպանության նախարարի խոսքերով՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում բոլոր խնդիրները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով: Ալասանիան նաեւ անընդունելի է համարել քաղաքացիական օդանավերը կործանելու բոլոր սպառնալիքները:

«Բանական մարդու համար նման գաղափարն ընդունելի չէ», հայտարարել է Վրաստանի պաշտպանության նախարարն ի հակադրություն ադրբեջանական կողմի, որն արդեն երեք տարի հայտարարում է, որ Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման դեպքում կկործանեն քաղաքացիական օդանավերը:

Վրաստանի պաշտպանության նախարարը նաեւ հույս է հայտնել, որ Հայաստանը թույլ չի տա Գյումրիում տեղակայված 102 ռուսական ռազմական բազայի գործողություններն ընդդեմ Վրաստանի շահերի:

«Մենք խոսել ենք այն վտանգների մասին, որոնք կան տարածաշրջանում, խոսել ենք, որ Աբխազիայում եւ Հարավային Օսիայում տեղակայված ռուսական ռազմաբազաները լուրջ վտանգ են Վրաստանի համար: Ինչ վերաբերում է Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազային, ապա մենք համոզված ենք, որ հայկական կողմը թույլ չի տա դրանց օգտագործումն ընդդեմ Վրաստանի»:

Վրաստանի պաշտպանության նախարարին երեկ իր նստավայրում ընդունել է նաեւ ՀՀ նախագահը:

Հ. Հ.

ՄՈՍԿՎԱ

## Մոսկվայում նշել են Վազգեն Սարգսյանի հիշատակը

**Հայ ազգային հերոս, Արցախյան հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրվա առթիվ Մոսկվայում պատվել են նրա հիշատակը, հայկական եկեղեցու տարածքում դրված խաչքարի մոտ տեղադրել են ծաղիկներ: Մարտի 5-ին՝ սպարապետի ծննդյան օրը կազմակերպված հիշատակի միջոցառմանը ներկա են եղել Ռուսաստանում «Երկրապահ» ներկայացուցչության ղեկավար Նելսոն Մարգարյանը, Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) առաջին փոխնախագահ Գեորգի Տեր-Ղազարյանը, ՌՀՄ փոխնախագահ Լեւոն Մանուկյանը, մտավորականներ, երիտասարդներ, Արցախյան ազատամարտի ներկայացուցիչներ եւ ուրիշներ: Նույն օրը միջոցառումները շարունակվել են նաեւ Ռուսաստանում Հայաստանի դեսպանատանը:**

## Մեծ Բրիտանիայի ԱԳ փոխնախարարը կայցելի Հայաստան



Հարավային Կովկաս կատարելիք այցի շրջանակում մարտի 10-12-ը Հայաստան կայցելի Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության արտաքին գործերի փոխնախարար Սայմոն Ֆրեյզերը, որը պատասխանատու է աշխարհի տարբեր երկրներում գործող բրիտանական կառավարության ներկայացուցչությունների համար: Ս. Ֆրեյզերը հանդիպումներ կունենա նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Ս. Ֆրեյզերը, ըստ Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան մամուլի հաղորդագրության, մեծ սպասումներ ունի Հայաստան իր առաջին այցից, որի ընթացքում նախատեսում է քննարկել ԵՄ-Հայաստան հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության ապահովման, Հայաստանի եւ ՄԹ միջեւ առեւտրի եւ ներդրումների ոլորտում համագործակցության խորացմանը վերաբերող հարցեր: Երկուշաբթի սպասվում է Ս. Ֆրեյզերի ճեպազրույցը լրագրողների հետ:

## Երեւանի ավագանու ընտրությունները՝ մի նոր փորձաքար իշխող մեծամասնության համար

*1-ին էջից*

**Մանավանդ՝ հայ ընտրողը եթե նկատի համախմբում ու դրանից հետո, բնականաբար, ավելի մեծ քվե տա ընդդիմադիր միասնական ցուցակին, արդեն իսկ նախագահական ընտրությունների ժամանակ որոշում կայացնելու սեփական իրավունքի հրճվանքը կրկին փորձարկելով, չի բացառվում այն հնարավորությունն ի վերջո, որ Երեւանում տոկոսային բարձր հարաբերակցություն գրանցի այլընտրանքը կամ նույնիսկ ընդդիմությունը, ու այս դեպքում իշխանական մեծամասնության համար կարգին գլխացավանք կստեղծվի եւ քաղաքական դաշտի փոփոխությունն արդեն իրական ուրվագծեր կստանա Նշենք, որ հաննձնաժողովներում ԲՀԿ-ի, «Ժառանգության», ՀՅԴ-ի եւ ՀԱԿ-ի ներկայացվածությունը լիովին հնարավորություն է տալիս իրական վերահսկողություն սահմանելու ընտրությունների ընթացքի վրա, ինչը փաստորեն չի օգտագործվել նախագահական ընտրություններում:**

**Ամեն դեպքում, մենք բոլորս միշտ ականատես ենք եղել համախմբման մասին խոսակցությունների միայն, որոնք իրականությունից հարյուրավոր կիլոմետրերով հեռու են եղել: Այժմ հայտնի չէ անգամ, թե միասնական ցուցակի վերաբերյալ խոսակցությունները զուտ մամուլում արտահայտվող կարծիքնե՞ր են, թե՞ դրա համար իրական հիմքեր կան: Բայց, օրինակ, ԲՀԿ-ականներից ոչ մեկը տեղյակ չէ ԲՀԿ-ի հետ այդպիսի բանակցությունների առկայության մասին, եւ ԲՀԿ-ն նույնքան պատճառ ունի միասնաբար հանդես չգալու, որքան որ թվում է, թե ունի:**

**Մինչեւ մարտի 21-ը կձեւավորվեն ընտրական տեղամասերը Երեւանի 13 ընտրատարածքներում, մինչեւ այդ ժամկետը կուսակցություններն էլ պետք է ներկայացնեն իրենց համամասնական ցուցակները, որոնց գրանցումը կկատարվի մինչեւ այս ամսվա վերջին օրը ներառյալ: Ապրիլի 7-ից կրկին կհայտնվենք քարոզարշավի մեջ, ու մի ամիս գլուխներս կդժժա մինչեւ մայիսի 3-ը:**

**Երեւանի ավագանու նախորդ ընտրությունները տեղի էին ունեցել 2009-ի մայիսի 31-ին: Ավագանու կազմը լինելու է 62 հոգուց:**

## Մեկնարկում են երիտասարդական միջոցառումների աջակցման կենտրոնի աշխատանքները

«Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ մեկնարկում են երիտասարդական միջոցառումների աջակցման կենտրոնի աշխատանքները: Կենտրոնի նպատակն է ուշադրության կենտրոնում պահել մարզերը, սահմանամերձ բնակավայրերը, քարոզել առողջ ապրելակերպ, նպաստել ճանաչողական բնույթի ծրագրերի, ինչպես նաեւ՝ մշակութային եւ սպորտային միջոցառումների անցկացմանը: Երիտասարդական միջոցառումների աջակցման կենտրոն կարող են դիմել բոլոր այն հասարակական կազմակերպությունները, ոչ պետական եւ պետական բուհերի ուսանողական միավորումների, միջին մասնագիտական կրթօջախների ուսանողական միավորումների, ինչպես նաեւ 18-35 տարեկան երիտասարդական խմբերի, ազգային փոքրամասնություննեի ներկայացուցիչները:

## Ծաղիկները ձեռքերիս ու գրպաններս դատարկ...

*1-ին էջից*

**Երիտասարդի ընտրած երկրորդ փունջը եւս թանկերից էր, ու Տաթեւիկը, զգալով տղայի հրաշալի ճաշակը, նաեւ հուզմունքն ու անհանգստությունը, ինքն էլ չհասկացավ, թե ինչպես կանչեց խանութից ձեռնունայն հեռացող երիտասարդին ու մեկնելով նրան առաջին հավանած փունջը՝ ասաց. «Վերցրեք, նվիրում եմ...»: Տղան ավելի հուզվեց եւ սկսեց համառել, կարմրել, անգամ նեղանալ: Բայց Տաթեւիկը համառ էր... Մի քանի րոպե անց նա հանեց իր դրամապանակից փնջի արժեքն ու դրեց խանութի դրամարկղը. Տաթեւիկը ժպտում էր, ինքն էլ չէր հասկանում ինչո՞ւ...**

**Գյուղացի Գագիկը նույն ընթացքում փայտ էր կոտրում գյուղի իրենց տան բակում, չնայած դրա կարիքը չկար, վառարանը վառ էր, փայտը՝ բավականին շատ: Գագիկը խիստ լարված էր աշխատում, արագ: Գագիկի կինը նույն ընթացքում տանն էր, նորածին դստեր հետ. երեխան դեռ մի քանի օրական էր: Հանկարծ տան բակում աղմուկը դադարեց, կացինը մի կողմ նետելով Գագիկն արագ, բայց արդեն առանց լարվելու հեռացավ բակից: Շուտով նա ներս մտավ տուն, քրտինքի մեջ կորած, անմիջապես մտավ ննջասենյակ, որտեղ կինն էր ու դուստրը: Կինը ժպտաց, բայց այն ժպիտներից էր դա, երբ արցունքներն էլ երեւում են. Գագիկի ձեռքին երկու փունջ, փոքրիկ փունջ մանուշակներ կային, նա ինքն էր քաղել՝ իր կնոջ համար...**

**Ուշ երեկոյան, արդեն գիշերային ժամի, ծաղկավաճառ Տաթեւիկը վերադարձավ տուն: Տան դռները բաց էին, բայց ներսում ոչ ոք չկար, մութ էր: Տաթեւիկն ամուսնուն կանչելով, զգուշությամբ առաջանում էր, երբ հանկարծ տան հյուրասենյակի լույսերը վառվեցին, ու ամուսինը, մի փաթեթ ձեռքին, երջանիկ ժպիտով կանգնեց նրա առջեւ: Տաթեւիկը ոչինչ չէր հասկանում, անգամ, երբ ամուսինը փաթեթը հանձնեց իրեն: «Ի՞նչ է սա, որտեղի՞ց, ինչպե՞ս ես գնել, ինչո՞վ...», աստիճանաբար հասկանալով՝ հարցրեց Տաթեւիկը: «Դա կարեւոր չէ, շնորհավոր տոնդ, սիրելիս», պատասխանեց Գեւորգը: Տաթեւիկը երջանիկ արագությամբ սկսեց քանդել փաթեթի կապերը. հագուստ էր, բաց կապույտ գույնի, այն նույն հագուստը, որը մի անգամ խանութի ցուցափեղկից տեսան երիտասարդ ամուսինները միասին, ու Տաթեւիկը, հայացքը երկար ժամանակ չկարողանալով կտրել, հոգոց հանեց... Գեւորգը նախորդ գիշեր տուն չէր եկել, ինչպես եւ Տաթեւիկը, ու եթե կինը ողջ գիշեր փնջեր էր պատրաստում մարտի 8-ի համար, ուրիշ կանանց համար, հոգնելով արդեն ծաղկի բույրից, ամուսինը տաքսի էր քշում, կարելի է ասել, հանրապետության ողջ տարածքում...**

**Ուրեմն շնորհավոր բոլոր կանանց տոնը, իսկ մենք, մենք չենք մոռացել ձեզ երջանիկ դարձնելու մեր առաքելությունը, այո, ծաղիկները ձեռքերիս ու գրպաններս դատարկ...**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Հայցադիմում ՄԻԵԴ-ին. Սաֆարովին տեղափոխել երրորդ երկիր՝ պատիժը կրելու համար

Սիրանուշ Սահակյանը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Գուրգեն Մարգարյանի ընտանիքի եւ Հայկ Մակուչյանի շահերի ներկայացուցիչն է: Նրա գնահատմամբ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ադրբեջանցի մարդասպան Սաֆարովի կողմից գազանաբար սպանված հայ սպա Գուրգեն Մարգարյանի գործով գնահատականները կլինեն սուր:




Սահակյանի փոխանցմամբ՝ հիմնական հարցադրումը, որ բարձրաձայնվել է դատարանում, նշված է, որ սպանությունը պայմանավորված է բացառիկ էթնիկ հիմքով: Հայկական կողմը դատական հայցով պահանջ է ուղղել Ադրբեջանին՝ հանցագործին երրորդ պետությանը հանձնելու եւ այնտեղ պատժի կրումը շարունակելու համար, քանի որ անհնար է, որ Ադրբեջանում ազգային հերոս համարվող Սաֆարովը պատիժ կրի:

Հայցի շրջանակներում՝ Գուրգեն Մարգարյանի ընտանիքի անդամները հրաժարվել են նյութական եւ բարոյական հատուցումից՝ հայտարարելով, որ ոչինչ չի կարող զավակի կորուստը լրացնել:

«Գուրգեն Մարգարյանի մայրը ցանկություն էր հայտնել որպես սփոփանք դատական հայցում ներառելու հայազգի ռազմագերիների ազատ արձակումը: Ցավոք, ռազմագերիների վերադարձի պահանջն իրատեսական չէ, քանի որ առարկայի շրջանակներից դուրս է», - ասաց Սահակյանը՝ հավելելով, որ ՄԻԵԴ-ում գործի քննությունը տեւում է միջինը 2-4 տարի, սակայն Մարգարյանի գործը առաջնահերթությունների ցանկում է, եւ դատարանն այդ հայցով արագ կզբաղվի. ամենայն հավանականությամբ կտեւի 6-12 ամիս:

«**Ազգ**»-ը տեղեկացրել էր, որ փետրվարի 28-ին Գուրգեն Մարգարյանի իրավահաջորդների ու Հայկ Մակուչյանի ներկայացուցիչներն անհատական գանգատ էին ներկայացրել ՄԻԵԴ:

Ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովը 2004-ի փետրվարի 19-ին Բուդապեշտում ՆԱՏՕ-ի եռամսյա անգլերենի դասընթացների մասնակցության ժամանակ գիշերը կացնի 16 հարվածներով դաժանաբար սպանել է քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանին: Հունգարական դատարանը Սաֆարովին դատապարտել էր ցմահ բանտարկության՝ պատիժը 30 տարի չվերանայելու պայմանով, սակայն 2012թ. օգոստոսի 31-ին Սաֆարովն արտահանձնվել է Ադրբեջան, որտեղ իբր պետք է շարունակեր պատիժը կրել: Սակայն հենց օդանավակայանում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւ նրան ներում է շնորհել, ազատ արձակել, տրամադրել 8 տարվա աշխատավարձը, նվիրել բնակարան ու արժանացրել մայորի կոչման: Միջազգային հանրությունը քննադատեց Ադրբեջանի այդ քայլը: Հայաստանը խզեց դիվանագիտական բոլոր հարաբերությունները Հունգարիայի հետ, ՀՀ նախագահի հանձնարարությամբ ստեղծվեց աշխատանքային խումբ՝ Ռամիլ Սաֆարովի նկատմամբ դեմ միջազգային բողոքարկման կապակցությամբ:

Հ. Հ.

# ՄԻՊ. ՀՔԾ-ն բավարար արդյունավետությամբ չի կատարել իր գործառույթները մարտի 1-ի գործի առնչությամբ

Մարդու իրավունքների պաշտպան **Կարեն Անդրեասյանը** Մարդու իրավունքների պաշտպանի ամենամյա զեկույցի շրջանակներում ներկայացրել է դատախազության եւ հատուկ քննչական ծառայության կառույցներում մեկ տարվա ընթացքում արձանագրված թերացումներն ու դրական գործընթացները:

Ըստ օմբուդսմենի, դատախազական հսկողության հետեւանքով բազմաթիվ քաղաքացիների իրավունքներ սահմանափակվում եւ խախտվում են, մտահոգիչ է նաեւ լիազորությունների չարաշահումը: Լիարժեք եւ օբյեկտիվ բացահայտված չէ խաղաղ պայմաններում բանակում մահացած անձանց գրեթե տասնամյա հնության քրեական գործերը: Դատախազությունը չի ձեռնարկել բավարար միջոցներ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրակաշառք տալու դեպքերը բազմակողմանի եւ օբյեկտիվ ուսումնասիրելու համար: Արձանագրվել են ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքների խախտումներ:

«ՀՔԾ-ն բավարար արդյունավետությամբ չի կատարել իր գործառույթները՝ կապված մարտի 1-ի 10 զոհերի մահվան փաստով կատարված նախաքննության հետ: ՀՔԾ-ն հաճախ չի պահպանել քրեական գործերի նախաքննության օրենքով սահմանված ժամկետները»:

Խնդիրներին զուգահեռ, Անդրեասյանն արձանագրում է նաեւ դրական զարգացումներ, մասնավորապես, նախորդ տարիների համեմատությամբ աճել է ծառայության կողմից վարույթում քննված գործերի քանակը: Դատախազությունն ու ծառայությունը հիմնականում ապահովել են գործունեության թափանցիկություն եւ հրապարակայնություն:

Հ. Հ.

# Կրկին «Carrefour»-ի՝ Հայաստան ժամանման մասին

**Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունից երեկ ստացանք Հայ-ֆրանսիական գործարարության ակումբի նամակը Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանին, որտեղ մասնավորապես ասված է.**

«Հարգելի պարոն վարչապետ,

Հայ-ֆրանսիական գործարարության ակումբը, որը հիմնադրվել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյի նախաձեռնությամբ 2011 թ.-ի աշնանը, իր շուրջն է համախմբում Հայաստանում ներկայացված խոշորագույն ֆրանսիական, ինչպես նաեւ Ֆրանսիայում իրենց գործունեությունը ծավալող հայկական ընկերություններին:

Ակումբի գործունեությունը միտված է մեր իրավասությունների շրջանակներում ներկայացնելու անդամակցող ընկերությունների շահերը պետական մարմիններին, ինչպես նաեւ նպաստելու երկու երկրների միջեւ տնտեսական, առեւտրային, գիտատեխնիկական կապերի զարգացմանը:

2012 թ.-ի դեկտեմբեր ամսից մեր ակումբի անդամ է նաեւ «Carrefour Armenia» ընկերությունը:

Վստահ ենք, որ «Carrefour»-ի ժամանումը շոշափելիորեն կնպաստի Հայաստանի տնտեսության զարգացմանը, մասնավորապես որակյալ աշխատատեղերի ստեղծմանը եւ սպառողներին մատուցվող ծառայությունների բարելավմանը թե՛ որակի բարձրացման, թե՛ ընտրության բազմազանության տեսանկյունից: Այդ իսկ պատճառով Հայ-ֆրանսիական գործարարության ակումբը կարեւորում է նմանատիպ խոշոր ներդրումային ծրագրի մոտալուտ իրականացումը Հայաստանում:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հույս ունենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր լիարժեք աջակցությունը կբերի այս ծրագրի հաջող գործարկմանը՝ ի նպաստ տնտեսության եւ հայ ժողովրդի:

Տեղյակ լինելով Ձեր նվիրվածությանը այս ծրագրի հաջողության գործում՝ կանխավ շնորհակալություն ենք հայտնում «Carrefour» ընկերության՝ Հայաստանում հաստատման ուղղությամբ Ձեր գործադրած ջանքերի համար»:

**Արման Փինարբասի**
**Հայ-ֆրանսիական գործարարության ակումբի նախագահ**

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Գործարար միջավայրը բարելավող միջոցառումներ 2013-ին

**2013-ին գործարար միջավայրի բարելավման ծրագրով կառավարությունը շուրջ 5 տասնյակ միջոցառումներ է իրականացնելու: Խոսելով ծրագրի մասին, էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանն ասաց, որ Doing Business 2013-ով մեր երկիրը 18 կետով առաջընթաց էր արձանագրել եւ հայտնվել 32-րդ տեղում՝ Բելգիայի եւ Նիդեռլանդների միջեւ: Նա նաեւ նշեց, որ Հայաստանի դիրքի հետագա բարելավումն ավելի դժվար է լինելու, բայց կարեւոր այդ քայլերը եւ որոշակի առաջընթաց կարձանագրվի:**

**Վարչապետ Տիգրան Սարգսյանն էլ մատնանշեց այն ցուցանիշները, որոնցով Հայաստանը ցածր դիրքեր է զբաղեցնում Doing Business-ում՝ միջազգային առեւտրի ռեժիմներն ու դատական վեճերը, կարեւոր համարելով բարեփոխումների անցկացումն այս ոլորտներում:**

# Շահութահարկի արտոնություն նոր աշխատատեղեր ստեղծողներին

**Առաջիկա շաբաթներին արդեն ուժի մեջ կմտնի այն որոշումը, համաձայն որի, նոր աշխատատեղեր ստեղծողների համար կառավարությունը շահութահարկի գծով արտոնություն է սահմանելու՝ նոր աշխատողների վարձատրության չափով նվազեցնելով տվյալ ընկերության շահութահարկի գումարը: Ինչպես լրագրողներին հայտնեց էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, պետությունն այդ ծախսն իր վրա է վերցնում: Նա հույս հայտնեց, որ դրանով կնվազի նաեւ ստվերը: Նախարարը տեղեկացրեց, որ այս արտոնությունը վերաբերելու է միայն արդյունաբերական ձեռնարկություններին: Առեւտրային գործունեություն կամ ծառայություններ մատուցող ընկերությունները չեն կարող օգտվել այս արտոնությունից:**

**Նոր աշխատատեղեր ստեղծող արտադրական ընկերություններին նման արտոնությունը կտրամադրվի միայն կառավարության որոշմամբ եւ ներկայացված առաջարկները երեք գերատեսչությունների՝ էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների եւ պետական եկամուտների կոմիտեի մասնագետների մանրամասն ուսումնասիրությունից հետո: Տիգրան Դավթյանի տեղեկացմամբ՝ այս որոշման նպատակը իրական հատվածում նոր աշխատատեղեր ստեղծումը խթանելն է:**



# Փոքր կենտրոնի կառուցապատման համար ավելի խիստ չափանիշներ

**Կառավարությունը երեկ հաստատեց «Երեւանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի հայեցակարգը: Կարեւորելով այս փաստաթուղթը՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ «սա մեր նախընտրական խոստումներից է, կարեւորագույն հարց է, որը մշտապես երեւանցիների ուշադրության կենտրոնում է»:**

**Հայեցակարգի մասին լրագրողներին որոշ մանրամասներ հաղորդեց քաղաքաշինության փոխնախարար Ռուզան Ալավերդյանը: Նրա հաղորդմամբ՝ այս հայեցակարգը հնարավորություն կտա թուլացնելու Երեւանի կենտրոնի գերբեռնվածությունը՝ կիրառելով տնտեսական, հարկային լծակներ, սեյսմիկ ռիսկերը հաշվի առնելով: Ավելի խիստ չափանիշներ կսահմանվեն Երեւանի կենտրոնում կառուցապատման համար, կտարանջատվեն կառուցապատման ենթակա տարածքները: Ռուզան Ալավերդյանը հայտնեց նաեւ, որ խոսքը Կասկադով, Չարենցի փողոցով մինչեւ «Այրարատ» կինոթատրոն, ապա Ծիծեռնակաբերդով մինչեւ Բաղրամյան պողոտա ընկած տարածքի մասին է: Հայեցակարգը օրենք կդառնա 6 ամսվա ընթացքում:**

**«Ազգ»-ի հարցին, թե արդյոք ուշացած չէ՞ այս հայեցակարգի եւ առանձին օրենքի ընդունումը, Ռուզան Ալավերդյանը պատասխանեց, որ միշտ էլ կարելի է դա ասել, բայց հիմա էլ ուշ չէ կարգավորել Երեւանի փոքր կենտրոնի կառուցապատման հարցերը:**

# Զբոսաշրջության մրցունակությամբ 11 տեղով առաջ ենք գնացել

**Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ, մինչ կառավարության նիստը, անդրադարձավ Հայաստանի զբոսաշրջության մրցունակության վերաբերյալ միջազգային գնահատականներին. «Երեկ հրապարակվել է մի նոր զեկույց, որն ամփոփում է տարին զբոսաշրջության մրցունակության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունն իր դիրքը բարելավել է 11 կետով: Այդ համեմատությունը կատարվում է 140 երկրների մեջ: Մենք զբաղեցնում ենք 79-րդ տեղը: Իհարկե, կարեւոր է, որ մենք 11 կետով բարելավել ենք մեր դիրքը, բայց դեռեւս մեծ անելիքներ ունենք, եւ անհրաժեշտ է, որպեսզի էկոնոմիկայի նախարարությունը, վերլուծելով այդ զեկույցը, մեզ ներկայացնի մեր ուժեղ եւ թույլ կողմերը եւ թե ինչ քայլեր պետք է ձեռնարկենք, որպեսզի այս տարի էլ էապես բարելավենք մեր դիրքերը»:**

# Շիրակը մարզպետ ունեցավ

**Կառավարության որոշմամբ երեկ Շիրակի մարզպետ նշանակվեց Ֆելիքս Ցոլակյանը: Նա նախկինում ղեկավարել է Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը, եղել հարկային պետական ծառայության պետը եւ ծնունդով Շիրակից է:**

Ա. Մ.

## Անդրադարձ

# Ուշադրություն, կոպիտ սխալ է կատարվում...



Եթե արցախյան հիմնախնդիրը համարենք հաշվարկից դուրս՝ որպես կարեւորագույնը, պետք է ընդունենք, որ անկախ պետականության կայացմանը զուգահեռ եւ դրա հետ անխզելիորեն կապված՝ մեր ամենաառաջնահերթ խնդիրը քաղաքացիական հասարակության ձեւավորումն ու զարգացումն են, որը կոչված է ապահովելու հասարակական բոլոր խավերի, խմբերի ու շերտերի համերաշխ գոյակցությունը՝ նկատի ունենալով դրանցից յուրաքանչյուրի անհրաժեշտությունն ու կարեւորությունը:

Դա, բնականաբար, կհանգեցնի համատարած անվստահության, հուսահատության, արդարության ու հավատի դեֆիցիտի աստիճանական նվազեցմանը, ինչպես նաեւ կնոսրացնի հասարակական թույնի իսկայական կուտակումը, որն առկա է հայկական մթնոլորտում:

Անկասկած, կպակասի արտագաղթը, որը մեծագույն չարիք է դարձել մեզ համար՝ խարխլելով կայացող պետականության հիմքերը եւ մթագնելով ազգային հեռանկարը:

Քաղաքացիական հասարակության ձեւավորումն ու զարգացումը, անշուշտ, ժամանակատար գործընթաց են, որին, գիտակցելով թե ենթագիտակցորեն, մասնակից է մեզնից յուրաքանչյուրը՝ նպաստելով կամ խանգարելով ընթացքին: Եվ մեր շուրջը կատարվող ամեն ինչ իր դրական կամ բացասական ազդեցությունն է թողնում դրա վրա. լինի դա հասարակական լայն հնչեղություն ստացած եւ հանիրավի չպատժված կամ կիսատ պատժված զոռբայություն (Երեւանում, Գյումրիում, Սյունիքում թե այլուր կատարված), ակնհայտորեն սխալ դատավճիռ, ծածկադմփոց արված չարագործություն, պետական եւ հասարակական միջոցների հանցավոր յուրացում, փոշիացում ու վատնում, եւ այլն, եւ այլն:

Քաղաքացիական հասարակության ձեւավորման ու զարգացման մեջ իրենց մասնակցությունն ունեն նաեւ պետական-կառավարական համակարգի չինովնիկները՝ իրենց ճիշտ կամ սխալ, ռացիոնալ կամ իռացիոնալ, հիմնավորված կամ չհիմնավորված որոշումներով:

Ասվածի համատեքստում կուզենայի անդրադառնալ 2013 թ. պետական բյուջեի որոշ նախանշումների, որոնց մասին հանգամանորեն խոսում է լրագրող **Արա Մարտիրոսյանը** «**Ազգ**» պարբերականի նոյեմբերի 7-ի համարում տպագրված հոդվածում՝ **«Դատավո՞ր դառնալ, թե՞ հայրենիքը պաշտպանել»**:

Խոսքը վերաբերում է բյուջետային որոշ աշխատողների աշխատավարձերին: Իմ կարծիքով, առավել եւս սահմանափակ հնարավորություններով եւ դեռեւս կայացման փուլում գտնվող մեր երկրի դեպքում, ծայրահեղ նրբանկատություն պետք է ցուցաբերել բյուջետային աշխատողների աշխատավարձերի սահմանման հարցում: Այստեղ ամեն ինչ պետք է լինի խորապես մտածված, հաշվարկված եւ հավասարակշռված, որովհետեւ աշխատավարձերի նոմինալ չափերից ոչ պակաս կարեւոր են նաեւ դրանց համեմատական մեծությունները:

Մոտեցումն այսպիսին պետք է լինի. սուղ միջոցներով երկիր ենք (առայժմ), հաշվարկի մեջ է պետական գանձարանի յուրաքանչյուր լուման (այսպես պետք է լինի): Ցածր աշխատավարձն էլ ժամանակավոր երեւույթ է: Նման դեպքում այն հիմնականում ըմբռնելի եւ համակերպվելի կլինի: Եվ, ինչպես հայտնի է կինոնկարում է ասվում, մեզ մոտ ուսուցչին քիչ են վճարում, բժշկին քիչ են վճարում, գիտնականին քիչ են վճարում, դատավորին քիչ են վճարում, որպեսզի տնտեսեն եւ այս երկիրը «դարձնեն երկիր»:

Բայց կատարվեց վերը բերված իմ երկարաշունչ մտավարժանքներին տրամագծորեն հակառակ երեւույթ: Քանքարավոր մեր կառավարությունը մոտ 4 տարի առաջ դատավորների միջին աշխատավարձը մի հարվածով կրկնակի բարձրացրեց՝ դարձնելով 460 հազար դրամ՝ պատճառաբանելով ոլորտում առկա... կոռուպցիոն ռիսկերի եւ դրանք նվազեցնելու արտաքուստ ազնիվ մղումով (ինչպիսի հնչեղ եւ միաժամանակ գանգուր արտահայտություն՝ կոռուպցիոն ռիսկեր): Ակամա մտածում ես. դե, եթե ասում են՝ ուրեմն այդ չարաբաստիկ ռիսկերը կան, եւ լավ է, որ միջոցներ են ձեռնարկվում: Բայց միայն դատավորնե՞րն են թաղված այդ կեղտաջրում: Իսկ ուսուցիչնե՞րը, դասախոսնե՞րը, բժիշկնե՞րը, մունիցիպալ համակարգի աշխատողնե՞րը եւ ուրիշ շատ շատերը զե՞րծ են այդ ախտից: Եվ հետո, կաշառակերությունը (մարմնավաճառության նման) առաջացել է մարդկության զարգացման վաղնջական ժամանակներում եւ հավերժական երեւույթ է: Պարզապես պետք է պատիժ լինի, շատ խիստ պատիժ: Իսկ աշխատավարձ բարձրացնելով կոռուպցիոն ռիսկերը բացառելը (կամ նույնիսկ նվազեցնելը) միամտություն է: Կաշառակերության մանրէով ախտահարվածը, զուգահեռաբար ձեռք է բերում նաեւ չհագենալու հիվանդություն: Աշխատավարձ բարձրացնելուց հետո միայն ժամանակի հարց է՝ կարճատեւ դադարից հետո չարածին մանրէն ե՞րբ է դարձյալ գլուխ բարձրացնելու:

Չորս տարի առաջ դատավորների աշխատավարձի կտրուկ ավելացումը եւս (հավանաբար նաեւ շատ շատերը) ճիշտ չհամարեցին: Եվ, խոստովանում եմ, մտածում էի, որ հայ ազնիվ դատավորների շարքում (որոնց թիվը, անկասկած, չի կարող փոքր լինել) կարող է գտնվել մեկը, որն իսկապես մտավորականի նման կընդվզի կատարվածի դեմ եւ կհայտարարի. «Ձեզ ո՞վ է թույլ տվել խախտել անմեղության կանխավարկածը եւ կասկածի տակ դնել իմ ազնվությունը: Ես դատապարտում եմ ձեր այդ քայլը: Բարձրացրեք նրանց աշխատավարձը, ովքեր կաշառակեր են:

Ես այդպիսին չեմ»:

Սա, իհարկե, լիրիկայի եւ ռոմանտիկայի ժանրից էր: Բայց, պատկերացնո՞ւմ եք, ինչպիսի շքեղ արձագանք կստանար այդպիսի քայլը հասարակության մեջ:

Անցնենք առաջ: Հիմա պարզվում է, որ կառավարությունը մտադիր է 2013 թ. բյուջեով, ըստ պրն Մարտիրոսյանի հոդվածի, դատավորների աշխատավարձը դարձնել 823 հազար դրամ: Եվ ես՝ ամեն ինչում նախ եւ առաջ ճիշտն ու ազնիվը որոնելու իմ անուղղելի հակվածությամբ, մտածում եմ, հավանաբար, կառավարությունը անցած չորս տարիների ընթացքում մշտադիտարկում է անցկացրել եւ պարզել, որ բնագավառում կոռուպցիոն ռիսկերը ոչ միայն չեն նվազել, այլեւ ընդհակառակը, ավելացել են... 1,79 անգամ: Սրան հետեւել է միկրոնի եւ կարատի ճշտությամբ հաշվարկ. 460x1,79=823 հազար դրամ:

Ես ուզում եմ դիմել հայրենի կառավարությանը.

Պարոնայք, տեսնո՞ւմ եք, ես հուսահատ համառությամբ ճգնում եմ հիմնավորումներ գտնել: Իմ փնտրտուքը ճի՞շտ է: Եթե ճիշտ է, ապա անցնող չորս տարիների ընթացքում պետք է համոզվեիք, որ ձեր կատարած քայլը՝ դատավորների աշխատավարձը իմպուլսացիոն ճոխացնելու համար, ճիշտ չէր արդյունքի տեսակետից եւ հիմա դուք ավելի մեծ սխալ կատարելու իրավունք չունեք: Եվ հետո, պարոնայք, ձեզ նախ եւ առաջ դատավորնե՞ր են հարկավոր, թե՞ ուզում եք արտոնյալների կաստա ստեղծել:

Համեմատության համար հոդվածագիրը բերում է հարակից թվեր միջին աշխատավարձը հանրապետությունում՝ 118 հազար դրամ, ուսուցիչներինը՝ 117 հազար:

Բայց սա դեռ ամենը չէ: Կառավարության միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսվում է 2014 թ. դատավորների աշխատավարձը դարձնել 1 մլն 34 հազար դրամ, 2015 թ.՝ 1 մլն 272 հազար:

Նույնիսկ սա դեռ ամենը չէ: Կենսաթոշակի անցնելիս դատավորները կստանան ամենայն հավելավճար իրենց աշխատավարձի 55 տոկոսի չափով, եւ նրանց թոշակը, փաստորեն, կկազմի 450-500 հազար դրամ: Համեմատության համար նշենք, որ շարքային մահկանացուի միջին թոշակի չափը... 25 հազար դրամ է:

Սա արդեն զավեշտ է, կատարյալ զավեշտ, անհեթեթություն, բացասական ինչպիսի պիտակավորում էլ տանք՝ կսազի: Կարծես հայրենի կառավարությունը մտադրվել է նվաստացնել իր զինվորականին, ուսուցչին, բժշկին, գիտնականին, արվեստագետին, ճարտարագետին, եւ դա նրան հաջողվել է:

Անկասկած, պարզունակ հավասարեցումն ու համահարթեցումն անընդունելի են: Նախապատվելիություններ չեն կարող չլինել: Համապատասխանաբար, աշխատավարձերն էլ տարբեր կլինեն: Բայց այդ տարբերությունները ողջամիտ սահմաններում պետք է լինեն, ասենք, երկու անգամ, երեք անգամ, գուցե եւ չորս անգամ: Բայց ոչ երբեք տասը, տասնհինգ, քսան անգամ: Առանց այն էլ ահագին մաղձ կա կուտակված մեզանում: Ինչո՞ւ ենք թեթեւ ձեռքով այն ավելացնում:

Ինչ վերաբերում է նախապատվելի ոլորտներին, ես ունեմ իմ ցուցակը. նախ եւ առաջ՝ զինվորն ու զինվորականը, ուսուցիչը, դասախոսն ու բժիշկը, բարիք արարող գյուղացին, բանվորը, շինարարը, գիտնականը, արվեստագետը, եւ այլն, եւ այլն, եւ, իհարկե, ոստիկանն ու դատավորը: Ընդհանուր առմամբ, իհարկե, բոլորը պետք է միեւնույն ուշադրությանը եւ հոգատարությանն արժանանան:

Վերջում՝ մեկ երրորդ միլիոներորդականի իրավունքով ես գրիչ վերցրի եւ Կիպլինգի հանճարեղ հեքիաթի պատկառելի հերոսի հորդորով ցանկացա խոսք բարբառել ի պաշտպանություն մանչուկի, որի անունն է քաղաքացիական **Ներդաշնակ** հասարակություն:

**ՀՐԱՉ ԱԹԱԲԵԿՅԱՆ**
**Ճարտարագետ-նախագծող**

---

## ՄԱՐՏԻ 6

# Առաքինի մարդկանց հիշատակի եվրոպական օրը

Մեծարելու համար բոլոր առաքինի, արդարամիտ մարդկանց հիշատակը, ովքեր մարդկային արժանապատվությունը վեր են դասել հնազանդությունից, ատելությունից, գաղափարախոսությունից եւ պայքարել են մարդկության դեմ գործված հանցագործությունների եւ բռնատիրության դեմ, Եվրախորհրդարանը 2012 թվականի մայիսի 10-ին ընդունել է որոշում, ըստ որի մարտի 6-ը հայտարարվել է «Առաքինի մարդկանց հիշատակի եվրոպական օր»:

Այս տարի առաջին անգամ, ըստ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրության, չորս կազմակերպություններ՝ CEJI-ն, AGBU Europe-ը, EUJS եւ IBUKA-ն, նշել են այդ օրը Պրահայում, Վարշավայում, Բիալիստոկում, Սանկտ Պետերբուրգում, Սարաեւոյում, Հռոմում, Միլանում եւ Բրյուսելում:

Մարտի 6-ին մասնավորապես նշվել է «Բ աշխարհամարտի ժամանակ բուլղարացի հրեաների փրկության 70-րդ տարեդարձը», որի ընթացքում ելույթներ են ունեցել Բուլղարիայի նախագահ Ռոզեն Պլեւնելիեւը եւ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը: Իսկ մարտի 7-ին վերոնշյալ որոշման հովանավորների՝ Նիկոլո Ռինալդիի եւ Իվո Վայգլի (Եվրախորհրդարանի անդամներ) նախաձեռնությամբ նշվել է զանգվածային վայրագությունները ապագայում կանխելու գործունեության ծրագրերի եւ կոնկրետ միջոցառումների օրը:

Ավելացնենք, որ CEJI-ն՝ «Հրեական նպաստ հօգուտ համապարփակ Եվրոպայի», կազմակերպությունն է, որը պայքարում է ընդդեմ հակասեմական եւ բոլոր տեսակի այլ խտրական դրսեւորումների:

AGBU Europe-ը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի վարչությունն է:

EUJT-ը «Հրեա ուսանողների եվրոպական միությունն» է, որը գլխավորում է Եվրոպայում եւ նախկին Խորհրդային Միությունում գործող 34 ազգային պատկանելության (հրեական) կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են ավելի քան 200 հազար ուսանողներ:

Իսկ IBUKA-ն Բելգիայում 1994-ին թութսիների (Ռուանդա) դեմ իրագործված ցեղասպանությունից փրկվածների հիմնած ոչ շահութաբեր միություն է:

Այս կազմակերպությունները գտնում են, որ բացի շվեդ դիվանագետ Ռաուլ Վալենբերգից, գերմանացի արդյունաբերող Օսկար Շինդլերից եւ ամերիկացի դիվանագետ Հենրի Մորգենթաուից կան բազմաթիվ ուրիշ արդարամիտ, խիզախ անձնավորություններ, որոնք ի գին իրենց կյանքի պայքարել են հանուն արդարության, եւ նրանց դրական կեցվածքը պետք է օրինակ ծառայի ուրիշներին, որպեսզի հնարավոր լինի կանխել հետապնդումներն ու ապագա ցեղասպանությունները:

**Հ. Ծ.**

# Լկտիանում են Ադրբեջանի հայկական շոշափուկները

*Ում գործակալն էլ լինեն, սրանք ծառայում են հայ սպանելու համար մարդասպանին հերոս հռչակող ադրբեջանցի հրոսակին*

«**Ազգի**» վերջին համարներում, անդրադառնալով Խոջալուի ռազմական հենակետի չեզոքացման տարեդարձի առնչությամբ Ադրբեջանի բարձրացրած վայնասունին, գրել էինք, որ ադրբեջանցի հրոսակի խնդիրը Ղարաբաղյան պատերազմում կրած խայտառակ պարտությունը չէ, պարզապես նա չի կարողանում մարսել Սումգայիթից հետո նաեւ Արցախում նախճիր սարքելու հնարավորությունից զրկվելը:

Քանի որ Ադրբեջանն ու Թուրքիան «Շունը՝ շնից, երկուսը՝ մի տնից» ժողովրդական ասացվածքին համապատասխան մեկ ազգի երկու պետություններ են, ուստի թուրք հրոսակը ձայնակցում է ցեղակցի վայնասունին: Սրա խնդիրն էլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է եւ ճանաչման հետեւանքով ժխտողականության դիրքերի սպառումը:

Սակայն խնդիր ունենք նաեւ մենք՝ Ադրբեջանի հայաստանյան շոշափուկների պատճառով: Սրանք էլ ոչ մի կերպ չեն կարողանում համակերպվել Ղարաբաղյան պատերազմում հայ ժողովրդի՝ սումգայիթյան մարդասպանների նկատմամբ տարած հաղթանակի հետ:

Անկախ էթնիկ ծագումից, հայի ազգանունը կրող եւ Հայաստանում թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող հայասյաց այս տականքների մի մասը Լեռնային Ղարաբաղը շարունակում է հանձնել Ադրբեջանին, մյուսներն էլ հայի կարգավիճակով «Խոջալուի ցեղասպանության համար» ներողություն են խնդրում ադրբեջանցիներից, անարգելով Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում, Շահումյանում, Գետաշենում, Մարաղայում ադրբեջանցի հրոսակի ձեռքով դաժանաբար սպանված հայ կանանց, երեխաների ու ծերերի հիշատակը եւ զորակցում հայ սպանելու համար ստոր մարդասպանին ազգային հերոս հռչակող ադրբեջանական ոհմակին:

Ղարաբաղն առ այսօր Ադրբեջանին հանձնող կամ ադրբեջանցի հրոսակի նախճիրն արդարացնելու՝ այն էլ որպես հայ, մարդասպանից ներողություն խնդրելու համար Խոջալուն «ցեղասպանություն» համարող այս տականքները չեն կարող մարդ լինել: Սրանք առավելագույնս ադրբեջանական բորենիների բեղմնավորում ունեցող վիժվածքներ են: Պարզապես հայ են ձեւանում, որ բարձրացնեն Հայաստանի եւ հայ ժողովրդի հանդեպ իրենց չարանենգ գործունեության արդյունավետությունը: Ըստ երեւույթին, այդ հրահանգն են ստացել դրսի մութ ուժերից:

Թերեւս դրսի ուժերի հանգամանքը կբարձրացներ այս վիժվածքների դեմ պայքարի արդյունավետությունը, թեկուզ բացահայտելով, թե սրանք այդ ուժերից որ մեկի ազդեցության գործակալներն են: Սակայն դրա համար անհրաժեշտ է, որ դրսի ուժերը չկաշկանդեն Հայաստանի ղեկավարությանը: Անկաշկանդ գործունեությունը ենթադրում է իշխանություն-հասարակություն համերաշխությունը, ինչպես նաեւ ժողովրդի վստահությունը երկրի նախագահին, ինչը համազոր է ժողովրդականության:

Ընտրություններում ձեռք բերած հաղթանակը, նաեւ այլ երկրների ղեկավարներից ստացած շնորհավորանքները որքան էլ պաշտոնավարման երկրորդ ժամկետն ապահովեն գործող նախագահին, ժողովրդականության հարցում դրանք միանգամայն անզոր են: Դրա նախապայմանը գոնե մի քիչ ժողովրդի հոգսերով ապրելն է, այլ ոչ թե ընչաքաղց օլիգարխներին գերշահույթ ապահովելն ու կոռուպցիայի հետ սերտաճելը:

Ադրբեջանական բորենու բեղմնավորում ունեցող այս վիժվածքները մութ ուժերից որ մեկի գործակալն էլ որ լինեն, ծառայում են հայ սպանելու համար ստոր մարդասպանին հերոսացնող ադրբեջանցի հրոսակի հայասյաց նկրտումներին: Չի բացառվում, որ վիժվածքների այս ծառայությունը պայմանավորված լինի Իսրայելից ուղղորդվող հրեական լոբբիի անժխտելի ազդեցությամբ Ադրբեջանում, ինչպես նաեւ Ադրբեջան-Իսրայել մերձեցմամբ:

Ամենայն հավանականությամբ, այդ մերձեցումն էր գոտեպնդում ադրբեջանցի հրոսակին, որ մերձեցմանը զուգընթաց ակտիվացնում է իր մարդասպան գործունեությունը շփման գծում: Սակայն ինչ էլ լինի, պետք է զսպել որպես հայ ներկայացող հայասյաց վիժվածքներին, այլապես կիմանալվի սրանց տերերը:

Համենայն դեպս, «**Ակօսի**» խմբագրապետ **Ռոբեր Քոփթաշը** «**Խոջալուի պատասխանատվությունը**» հոդվածում «այդ ողբերգությունը» պատերազմի չվերագրելու եւ Խոջալուի համար պատասխանատվություն ստանձնելու կոչ է արել հայերին, եթե նրանք իրենց համարում են ցեղասպանության զոհը:

Քոփթաշի այդ կոչին բացի ադրբեջանական կայքէջերից, գոհունակությամբ արձագանքել է նաեւ Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը: Թերեւս կարելի էր պատասխանել «Ակօսի» խմբագրապետին, սակայն մեր հայրենակից **Սարգիս Հացպանյանն** արդեն պատասխանել է: Մարտի 5-ին Կ. Պոլսո «**Հայթերթ**» կայքէջում «**Խոջալուի առնչությամբ մարդկային արժանապատվության եւ պատասխանատվության մասին**» վերնագրով հրապարակված հակիրճ բայց բովանդակալից հոդվածում Հացպանյանը՝ Քոփթաշին դիմելով, մասնավորապես ասում է. *«Ես կյանքում թերեւս չեմ կարդացել ավելի անպատասխանատու հոդված, քան քո «Խոջալուի պատասխանատվությունը» վերնագրով գրածն է: Ուզում եմ իմանաս, որ հայ ժողովուրդը Խոջալուի սինդրոմով տառապելու ոչ խնդիր ունի, ոչ էլ այդ հարցում, ինչպես ակնարկում ես, լռելու: Այդ աբսուրդն առաջին անգամ քեզնից եմ լսում: Քո գրածում առողջ դատողության, տրամաբանության եւ մարդկային արժանապատվության մասին ոչ մի արտահայտություն չգտնելու դժբախտությունն ապրելուց զատ, ապրեցի նաեւ հայ ժողովրդին ցեղասպանության մեջ մեղադրելու անբարտավանությունից բխող շփոթմունքը: Ցավոք, հնարավոր չէ չափսոսալ, թե քո գրածներում ինչպես են Խոջալուի մասին անլուռ ճշմարտությունները գիտակցաբար քողարկվում Ադրբեջանում գործող ռասիստ-ֆաշիստական բռնատիրության 21-ամյա ստերով եւ աներեւակայելի խարդախությունը քո միջնորդությամբ ջանասիրաբար մատուցվում տեղի ունեցածից անտեղյակ Թուրքիայի հայ համայնքին»:*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Արաբական լիգայում Սիրիայի տեղը կզբաղեցնի ընդդիմությունը

Արաբական պետությունների լիգան սիրիական ընդդիմությանն առաջարկել է կազմակերպությունում զբաղեցնել Դամասկոսի պաշտոնական ներկայացուցչի տեղը: Այդ մասին լրագրողներին հայտնել է Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Նաբիլ ալ Արաբին:

Գլխավոր քարտուղարն ասել է, որ տվյալ որոշման օգտին քվեարկել են կազմակերպության մեջ մտնող բոլոր 22 արաբական երկրների ներկայացուցիչները, բացի Լիբանանից: Իրաքը եւ Ալժիրը բանաձեւին հավանություն են տվել վերապահումներով: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը:

Արաբական լիգան սիրիական ընդդիմության գլխավոր կազմակերպությանը՝ Ազգային կոալիցիային առաջարկել է Սիրիայի տեղը զբաղեցնել Դոհայում կայանալիք լիգայի առաջիկա գագաթաժողովում՝ պայմանով, որ ազգային կոալիցիան կազմի գործկոմ:

Սիրիական ընդդիմության ներկայացուցիչները ողջունել են տվյալ որոշումը եւ դա համարում են Սիրիայի քաղաքացիական պատերազմի ժամանակամիջոցում Արաբական լիգայի արած ամենակարեւոր քայլը:

Արաբական պետությունների լիգան իր շարքերից Սիրիային հեռացրել էր 2011-ին, նախագահ Բաշար Ասադին մեղադրելով առաջարկված հաշտության ծրագիրը չկատարելու մեջ:

ԹԵԺ ԿԵՏԵՐ

# Գոլանում առեւանգվել է ՄԱԿ-ի 21 խաղաղարար

*Սկսվել են բանակցություններ*

**Ֆիլիպինների ներկայացուցիչները երեկ բանակցություն են սկսել սիրիական ընդդիմության ղեկավարների հետ, որպեսզի շուտափույթ արձակվեն նախօրեին Գոլանի բարձունքներում առեւանգված ՄԱԿ-ի 21 ֆիլիպինցի խաղաղարարները: Նրանք ծառայում էին Գոլանի բարձունքներում տարանջատմանը հետեւող ՄԱԿ-ի ուժերում՝ UNDOF-ում, հաղորդում է BBC-ն:**



**Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ այսպես կոչված «Յարմուկի բրիգադի» գրոհայինները Սիրիային պատկանող Գոլանի բարձունքների հարավային մասում՝ Ջումլայի շրջանում հարձակվել են ՄԱԿ-ի դիտորդների ավտոշարասյան վրա եւ առեւանգել ֆիլիպինցի զինծառայողների: Առեւանգումից հետո այդ սուննի գրոհայինները համացանցում տեղադրել էին տեսահոլովակ, որով պահանջել էին Սիրիայի կառավարական զորքը դուրս բերել Ջումլայից, այլապես ֆիլիպինցի 21 պատանդները կհամարվեն «ռազմագերիներ»:**

**Տեսագրված մեկ ուրիշ ելույթում գրոհայինները Սիրիայի նախագահ Բաշար Ասադին, Եվրամիությանը եւ ՄԱԿ-ին մեղադրել էին Իսրայելի հետ համագործակցելու մեջ:**

**Ֆիլիպինների արտգործնախարարությունը եւ ՄԱԿ-ի ղեկավարությունը լուրջ մտահոգություն են արտահայտել միջադեպի առնչությամբ: Նրանք նշել են, որ պատանդների ապահովության երաշխիքներ չկան, քանի որ գրոհայինները իրենց պահում են անկանխատեսելի կերպով եւ առաջ են քաշում «անիրագործելի պահանջներ»:**

**Մեկնաբանները կարծում են, որ օտարերկրացի պատանդների առեւանգումը դժվար թե ինչ-որ ձեւով ազդի Բաշար Ասադի բանակի գործողությունների վրա: Սակայն խիստ հավանական է, որ միջադեպն արագացնի UNDOF-ի առաքելության ձախողումը եւ սուննի գրոհայիններին թույլ տա վերահսկողության տակ առնել Իսրայելի սահմանը: Սիրիայում աշխատող օտարերկրացի լրագրողների հաղորդումները վկայում են, որ այդ գրոհայիններից շատերը մասնակցում են Ասադի վարչակարգի դեմ մղվող պատերազմին եւ հույս ունեն դրա տապալումից հետո դառնալ «Սրբազան Էլ Քուդսի (Երուսաղեմի) ազատագրման» մասնակիցներ:**

**Ներկայումս UNDOF-ի զորաբաժնի թվակազմը 1000-ից պակաս են: Զինծառայողներն ավստրիացիներ, հնդիկներ եւ ֆիլիպինցիներ են: Վերջիններիս թիվը 300 է: Ֆիլիպինցի 21 զինծառայողների առեւանգումը կարող է պատճառ դառնալ, որ պաշտոնական Մանիլան որոշի իր զինվորներին ու սպաներին հետ կանչել սիրիա-իսրայելական սահմանից: Ավելի վաղ զորաբաժնից հեռացել էին 150 ճապոնացի եւ խորվաթ, 20 կանադացի զինծառայողներ:**

# ԿԺԴՀ-ն չեղյալ հայտարարեց երկու Կորեաների զինադադարի համաձայնագիրը

Հյուսիսային եւ Հարավային Կորեաների զինադադարի համաձայնագիր այլեւս գոյություն չունի: Այսպիսի վերտառությամբ մարտի 7-ին հոդված է լույս տեսել հյուսիսկորեական «Նոդոն սինմուն» կենտրոնական թերթում, որը Աշխատանքային կուսակցության պաշտոնաթերթն է:

Հոդվածում ասվում է, որ մարտի 1-ին սկսված ամերիկա-հարավկորեական զորավարժություններն ապացուցում են, որ 1953-ի ամռանը կնքված համաձայնագիրը «այլեւս չի կարող երաշխավորել Կորեական թերակղզու խաղաղության ապահովումը»:

Հյուսիսկորեական մյուս լրատվամիջոցները ավանդույթի համաձայն կրկնել են այս պնդումները եւ բավական մարտականորեն են տրամադրված:

Այսպես, Կորեայի կենտրոնական հեռագրական գործակալությունը ակնարկում է, որ հնարավոր է նոր պատերազմ: Սկսված զորավարժությունների պատճառով զինադադարի համաձայնագիրը չեղյալ հայտարարելու ԿԺԴՀ զինվորական հրամանատարության որոշումը թույլ կտա «մեկ հարվածով խափանել միջուկային պատերազմ սանձազերծելու ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների փորձերը եւ ամենասեղմ ժամկետներում ավարտել հայրենիքի վերամիավորման պատմական գործը», նշվում է հյուսիսկորեական թերթերում, որոնցից մեջբերում է անում ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Երկու Կորեաների զինադադարի համաձայնագիրը ստորագրվեց 1953 թվականի հուլիսի 27-ին երկու տարի տեւած դժվարին բանակցություններից հետո: Փաստաթղթի պայմանների համաձայն, երկու Կորեաները իրենց գրաված դիրքերից հեռացան 2 կմ-ով եւ պայմանավորվեցին ապառազմականացված գոտի ստեղծել համատեղ վերահսկողության ներքո:

Այսպիսով, 1945-ին առաջին անգամ կիսված միասնական պետությունը 1953-ին կրկին բաժանվեց երկու ճամբարի: Համաձայնագիրը հաշտության պայմանագրով փոխարինելու ԿԺԴՀ-ի բազմաթիվ առաջարկությունները Վաշինգտոնում եւ Սեուլում անտեսվեցին: Այդ պատճառով հակամարտ կողմերը փաստորեն մնում են պատերազմական վիճակում:

# Մարզական

## Առաջնության պարգեւների համար պայքարը վերսկսվում է




Եռամսյա ընդմիջումից հետո վաղը վերսկսվում է ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունը: Գարնան այս ժամանակահատվածում մշտապես խնդիրներ են ծագում կապված խաղադաշտերի հետ: Քանի որ մարտի 26-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալու է Հայաստան-Չեխիա ընտրական մրցախաղը, ուստի մինչ այդ այնտեղ առաջնության եւ գավաթի հանդիպումներ չեն անցկացվի: Ինչպես հայտնի է, հենց «Հանրապետականում» են իրենց տնային հանդիպումներն անցկացնում «Փյունիկը» եւ «Ուլիսը»: «Փյունիկը» վաղը հյուրընկալվելու է «Շիրակին»: Գյումրեցիներն էլ ստիպված են առայժմ իրենց մրցակիցներին հյուրընկալելու Իջեւանի «Արնար» մարզադաշտում, որպեսզի չփչացնեն անցյալ տարի վերանորոգված Գյումրու քաղաքային մարզադաշտի խոտածածկը: Իսկ ահա վաղը կայանալիք մյուս խաղում «Գանձասարն» «Իմպուլսին» կհյուրընկալի Կապանի իր սեփական մարզադաշտում:

Մարտի 13-ին կայանալիք «Ուլիս»-«Արարատ» հանդիպումը երկրի չեմպիոնը ստիպված է անցկացնել արարատցիների համար սեփական մարզադաշտ հանդիսացող Աբովյանի քաղաքային մարզադաշտում: Իսկ ահա «Միկան» «Բանանցի» հետ կմրցի իր սեփական մարզադաշտում:

Հայաստանի առաջնության մասնակիցներից յուրաքանչյուրը յուրովի է նախապատրաստվել գարնանը վերսկսվող մրցաշրջանին՝ ուսումնամարզական հավաքներ անցկացնելով նաեւ արտերկրում, փորձարկելով նոր ֆուտբոլիստների: Ձմռան տրանսֆերային շուկայում մեր թիմերից ամենաակտիվը Կապանի «Գանձասարն» էր, որը զգալիորեն համալրեց կազմը փորձառու ֆուտբոլիստներով: Սակայն առայժմ դա իր արդյունքը չի տվել: Համենայնդեպս ձմռանն անցկացրած ստուգողական հանդիպումներում կապանցիներն անհաջող խաղացին: Թիմն այժմ 48 միավորով 4-րդ հորիզոնականում է եւ «Իմպուլսի» ու «Փյունիկի» հետ պայքարում է բրոնզե մեդալների համար: «Իմպուլսը» եւս 48 միավոր է վաստակել, իսկ «Փյունիկն» ունի 46 միավոր: Այնպես որ «Գանձասարի» եւ «Իմպուլսի» մրցավեճում հաղթանակի արժեքը չափազանց բարձր է:

Առաջնության առաջատար Գյումրիի «Շիրակը» 3 միավորով գերազանցում է իր գլխավոր մրցակից «Միկային»: «Շիրակը» եւս ամրապնդել է կազմը 3 լեգեոնականներով: Ճիշտ է, թիմից հեռացել են փորձառու պաշտպան Հրայր Մկոյանը, որը տեղափոխվել է Չեխիա, եւ Իրանում հանդես եկող հարձակվող Ֆոֆանա Բեկոն:

«Միկան» թերեւս միակ թիմն է, որ ձմռանը համալրում չի ստացել՝ ապավինելով սեփական կադրերին: Փոխարենը թիմից հեռացել են փորձառու դարպասապահ Գեւորգ Կասպարովը եւ ռմբարկուի հատկանիշներով օժտված Նարեկ Բեգլարյանը: «Փյունիկը» եւս վերջին տարիներին ընդհանրապես հրաժարվել է լեգեոնականներ հրավիրելու պրակտիկայից եւ լիովին ապավինում է սեփական մարզադպրոցի կադրերին, նաեւ թիմ է հրավիրում արտերկրում հանդես եկող հայազգի երիտասարդ ֆուտբոլիստների:

Մինչեւ մայիս կանցկացվեն առաջնության ավարտին մնացած 10 տուրերը, որոնք էլ կտան մարզասերներին հուզող բոլոր հարցերի պատասխանները: Հետաքրքրական պայքար է սպասվում ինչպես առաջնության պարգեւների, այնպես էլ բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար:

## «Յուվենտուսն» ու ՊՍԺ-ն քառորդ եզրափակիչում են

**Մադրիդի «Ռեալից» ու Դորտմունդի «Բորուսիայից» հետո եւս 2 թիմեր՝ Թուրինի «Յուվենտուսն» ու ֆրանսիական ՊՍԺ-ն քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճեցին:**



«Յուվենտուսին» հաջորդ փուլի ուղեգիրը բաժին հասավ առանց մեծ ջանքերի: Իտալական ակումբը դեռեւս առաջին խաղում էր գործնականում լուծել ուղեգրի հարցը՝ հյուրընկալվելիս 3-0 հաշվով հաղթելով շոտլանդական «Սելթիկին»: Սեփական հարկի տակ էլ Բուֆոնը դարպասն անառիկ պահեց, իսկ նրա թիմակիցներից Մատրին ու Կվալյարելլան 2 գոլ խփելով, ապահովեցին «Յուվենտուսի» հաղթանակը:

Խաղի մասին թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին է:

**Անտոնիո Կոնտե** («Յուվենտուս») - Մենք լավ անցկացրինք այս հանդիպումը ու կրկին հաղթեցինք: Թիմի մոտ դեռեւս հաղթանակի քաղց է զգացվում: Անցյալ տարի մենք նվաճեցինք Իտալիայի չեմպիոնի տիտղոսը եւ այժմ նոր բարձունքի ենք ձգտում: Այդ ճանապարհին մեր հաղթելու քաղցը դեռ չի հագեցել: Կսպասենք վիճակահանությանը: Իսկ մինչ այդ պետք է կենտրոնանանք Իտալիայի առաջնության հանդիպումների վրա, քանի որ այդ մրցաշարում հաղթելն այնքան էլ հեշտ չէ:

**Նիլ Լենոն** («Սելթիկ») - Ամեն ինչ վճռեց մրցակցի ավելի բարձր կարգը: Մեզ հաջողվեց որակյալ ֆուտբոլ ցուցադրել՝ բացառությամբ գոլային պահերի իրացումից: Հուսով եմ, որ իմ տղաները շատ բան սովորեցին, ինչը կօգնի նրանց առաջիկայում առաջադիմելու: Այսօր ես երջանիկ մարզիչ եմ: Ինձ համար մեծ պատիվ է նման թիմ մարզելը: Շոտլանդիայի առաջնությունում մեր գործերը լավ են ընթանում, գավաթի խաղարկությունում էլ մտել ենք կիսաեզրափակիչ: Մեզ համար ուսանելի էր չեմպիոնների լիգայում հանդես գալը:

Ֆրանսիական ՊՍԺ-ն էլ առաջին խաղում հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթել էր իսպանական «Վալենսիային» ու թվում էր, թե պատասխան խաղում առանձնապես խնդիրներ չեն ծագի: Սակայն Փարիզում թիմի մեկնարկային կազմում չէին Զլատան Իբրահիմովիչն ու Վերատին, ինչն իր ազդեցությունը թողեց: 55-րդ րոպեին «Վալենսիայի» ֆուտբոլիստներին հաջողվեց բացել հաշիվը: Սակայն 11 րոպե անց Լավեսին վերականգնեց հավասարակշռությունը, որը մինչեւ խաղավերջ չխախտվեց:

Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին էր:

**Կառլո Անչելոտի** (ՊՍԺ) - Շատ բարդ խաղ էր: Գիտակցում էինք, որ «Վալենսիան» Փարիզ է ժամանել իր լավագույն խաղը ցուցադրելու: Առաջին խաղակեսում այնքան էլ լավ չխաղացինք, իսկ 2-րդ խաղակեսում գոլ բաց թողնելուց հետո սթափվեցինք ու մեզ բնորոշ խաղը ցուցադրեցինք: Մենք մեծ նվաճման հասանք, քանի որ 18 տարի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչում չէինք հայտնվել: Իհարկե, մրցաշարի հաղթող դառնալը շատ դժվար է, սակայն կներդնենք մեր բոլոր ուժերը:

**Էռնեստո Վալվերդե** («Վալենսիա») - Մենք Փարիզ էինք ժամանել այն հույսով, որ կշարունակենք պայքարը: Գիտակցում էինք, որ շատ բարդ է լինելու, քանի որ մրցակիցը լավ թիմ է: Գոլային պահեր շատ ունեցանք, սակայն միայն մեկն իրացրինք: Չնայած անհաջողությանը, Փարիզից հեռանում ենք գլուխներս բարձր:

Քառորդ եզրափակիչի մյուս 4 ուղեգրերի տերերը հայտնի կդառնան հաջորդ շաբաթ: Մարտի 12-ին կկայանան «Շալկե-04»-«Գալաթասարայ» եւ «Բարսելոն»-«Միլան» մրցախաղերը: Հաջորդ օրը մրցապարեզ դուրս կգան «Բավարիան» ու «Արսենալը», «Մալագան» ու «Պորտոն»:

### ՇԱԽՄԱՏ

## Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը Բրազիլիայի չեմպիոն



**Գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը գերազանց հանդես եկավ Մոնտենեգրո քաղաքում անցկացված Բրազիլիայի շախմատի առաջնությունում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: 12 մասնակիցների միջեւ շրջանաձեւ մրցակարգով անցկացված մրցաշարում բրազիլահայ շախմատիստը 11 հնարավորից վաստակեց 8,5 միավոր: Նա կես միավորով գերազանցեց 2-րդ եւ 3-րդ տեղերը գրաված միջազգային վարպետ Ամորիմ Բարբոսային եւ Մաթեուս Մենդոնկային:**

**Մխիթարյանն անհաջող մեկնարկեց՝ հաշտություն կնքելով Ամորիմ Բարբոսայի հետ ու պարտվելով Յագո Սանտյագոյին: Անհաջողությունը չընկճեց հայ շախմատիստին, որը հաջորդ 7 տուրերում մեկը մյուսի հետեւից պարտության մատնեց Ֆլավիո Օլիվեյրային, Լուիսմար Բրիտոյին, Ֆելիպե Մենային, Կլաուս Գոքզին, Բրիտո Մոլինային, Կաստրո Կարնեյրոյին եւ Մաքսիմո Մաչեդոյին: Ավարտական 2 տուրերում Մխիթարյանը հաշտություն կնքեց Մաթեուս Մենդոնկայի եւ Անդրեյ Սոուզայի հետ:**

## Արոնյանը կմասնակցի Ալյոխինի առաջին հուշամրցաշարին

**Ռուսաստանի շախմատի ֆեդերացիայի որոշմամբ այս տարի առաջին անգամ կանցկացվի ռուս հռչակավոր շախմատիստ, շախմատի աշխարհի չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հուշամրցաշարը: 10 տուրից բաղկացած հուշամրցաշարի առաջին մասը կանցկացվի ապրիլի 21-26-ը Փարիզում՝ Լուվրի թանգարանում, իսկ մնացած 5 տուրերի հանդիպումները տեղի կունենան Սանկտ Պետերբուրգի Ռուսական թանգարանում՝ ապրիլի 28-ից մայիսի 1-ը:**

**Հուշամրցաշարում իրենց մասնակցությունն արդեն հաստատել են Լեւոն Արոնյանը, Վիշվանաթան Անանդը, Վլադիմիր Կրամնիկը, Բորիս Գելֆանդն ու Պյոտր Սվիդլերը: Հուշամրցաշարի անցկացումը կուղեկցվի կուլտուրական ծրագրով, որն իր մեջ ներառում է հայտնի երաժիշտների, նկարիչների եւ հասարակական գործիչների այցելություններ: Մրցաշարի հովանավորներն են գործարարներ Գենադի Տիմչենկոն եւ Անդրեյ Ֆիլատովը:**

## Հայ շախմատիստների եռյակը հետապնդում է առաջատարներին

Իրանի Ռաշտ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 8-րդ եւ 9-րդ տուրերի մրցախաղերից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Սիմոն Մկրտչյանը, Վահե Բաղդասարյանն ու Սարգիս Մանուկյանը, որոնք վաստակել են 6-ական միավոր: Մկրտչյանը ոչ-ոքի խաղաց Շահին Սադեհիի հետ ու հաղթեց Միխայիլ Մոզարովին: Նույն սցենարով ընթացան Բաղդասարյանի պարտիաները Մեհդի Հուսեյնիպուրի եւ Մուրադ Նուրիի հետ: Իսկ ահա Մանուկյանը 2 հաղթանակ տոնեց Սահիդ Արաբիի եւ Մեհդի Մահդավիրադի հետ պարտիաներում:

Հայ շախմատիստների եռյակը մեկ միավորով է զիջում աղյուսակը գլխավորող իրանցիներ Հոմայուն Տուֆիղիին, Արաշ Ռոգհանիին, Համեդ Մուսավիանին, Պուրիա Դարինիին, վրացի Շոթա Ազալաձեին եւ ադրբեջանցի Միսրադին Իսկանդարովին:

Մանուել Պետրոսյանն ունի 5,5 միավոր, Նորայր Թորոսյանը՝ 5: 4,5 միավոր է վաստակել Սեդրակ Մաթեւոսյանը, 3,5՝ Մարիա Գեւորգյանը, 3՝ Արմինե Բաբայանը:

## Ռունին տրանսֆերի կհանվի

Բացառված չէ, որ ֆուտբոլային մրցաշրջանի ավարտից հետո «Մանչեսթր Յունայթեդը» տրանսֆերի հանի թիմի հարձակվող Ուեյն Ռունիին: Ակումբը պատրաստ է 20 մլն ֆունտ ստեռլինգի դիմաց բաժանվել ֆուտբոլիստից, որի գործողություններից դժգոհ է թիմի գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնը:

Ռունին «Մանչեսթր Յունայթեդում» հաշվի առնելով նաեւ պարգեւավճարները, շաբաթական 300 հազար ֆունտ ստեռլինգ է ստանում: Նման գումար Ռունիին վճարելու հնարավորություն չունի մանչեսթրյան մյուս ակումբը՝ «Մանչեսթր Սիթին», որը հետաքրքրված է ֆուտբոլիստի ծառայություններով: Նրան գնելու համար ակումբը պետք է վաճառի իր ֆուտբոլիստներից մի քանիսին: Անցյալ տարվա ամռանը Ռունիին 46 մլն եվրոյով ցանկանում էր գնել ՊՍԺ-ն, սակայն գործարքը տեղի չունեցավ:

## Մարադոնան հավանաբար գլխավորի «Մոնպելյեն»

Մեծ է հավանականությունը, որ ընթացիկ մրցաշրջանի ավարտից հետո ֆրանսիական «Մոնպելյեի» գլխավոր մարզչի պաշտոնը զբաղեցնի Դիեգո Մարադոնան: Մրցաշրջանի ավարտին ավարտվում է թիմի գլխավոր մարզիչ Ռենե Ժիրարի պայմանագրի ժամկետը եւ ակումբն արդեն սկսել է նոր մարզչի որոնումները: «Մոնպելյեն» ներկայումս ընթանում է 6-րդ տեղում: «Մոնպելյեն» Ֆրանսիայի գործող չեմպիոնն է:

Մարադոնայի գործակալ Յուսեֆ Հայդժուբը նշել է, որ շուտով կսկսեն բանակցել «Մոնպելյեի» ղեկավարության հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա դեմքերով

# Հայտնի հայուհիներից երկուսը՝ ամենախելացին եւ ամենասեքսուալը

Աշխարհում հայտնի բազմաթիվ հայուհիներով հաճախ հպարտանալու առիթներ ունենք: Երբ պետք է թվենք հայկական ծագմամբ հանրահռչակ հայուհիներին՝ հիշում ենք եւ Մերիլին Մոնրոյին եւ Շերլին Սարգսյանին՝ Շերին, աշխարհում հայտնի առաջին կին դիվանագետ Դիանա Աբգարին, հանրահայտ երգչուհիներ Իրինա Ալեգրովային ու Զառա Դոլուխանովային...անուններ, անուններ, անվերջ թվելի, մեզ շոյող, մեր մտքին բան ասող, հատկապես եթե տոն է ու կուզենաս նրանց կերպարները մոտեցնել օրվա խորհրդին



*Մարգարիտա Սիմոնյան*

Հետաքրքական է, որ հայկական արյուն են գտել անգամ արքայադուստր Դիանայի ծագումնաբանության մեջ՝ պեղելով, որ արքայադստեր մայրական կողմի նախապապը, Թեոդոր Ֆորբսը, ամուսնացած է եղել Հնդկաստանից Էլիզա (Եղիսաբեթ) անունով մի հայուհու հետ:

Միայն երկուսի մասին, եւ օրվա թեթեւ ու տոնական, ոչինչ չպարտադրող ռիթմի մեջ մի պահ կկտրեն ձեզ առօրյայից, երկու հայտնի հեռուստաաստղեր՝ հայկական ծագմամբ:

### Թագուհի Մարգո

Russian Todey հեռուստաալիքի գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանը համարվում է Ռուսաստանի խելացի կանանցից մեկը: Կապուտաչ, սեւամազ գեղեցկուհի Մարգարիտային հաճախ կոչում էին նաեւ Կրեմլի ուստա կամ Թագուհի Մարգո: Ռուսական միջավայրում նա ռուս լրագրողներից հաճախ էր տարբերվում բնական եւ անմիջական պահվածքով, որը ճշմարտացի երանգ էր տալիս նաեւ նրա պատրաստած հեռուստանյութին կամ վարած հաղորդումներին: Նա սկսել է որպես Կրասնոդարի երկրամասի տեղական հեռուստաալիքի լրագրող, քանի որ հենց այնտեղ, հայկական ընտանիքում է նա ծնվել: Հետո արդեն աշխատել է ռուսական կենտրոնական ալիքներում, լուսաբանել Պուտինին եւ նրա քաղաքականությունը, պատրաստել ռեպորտաժներ պատերազմական Չեչնիայից, ապա եւ մի շարք պատասխանատու պաշտոններ վարել համառուսական հեռուստաալիքներում: Նա անցել է պարզ, հասարակ ընտանիքից եկած աղջնակից մինչեւ Ռուսաստանի ամենաճանաչված դեմքերից մեկը լինելու ճանապարհը սեփական տաղանդի, աշխատասիրության եւ համառության շնորհիվ, շրջանցելով փառքից գլուխները կորցրած շատ հեղինակավորների՝ իր հասարակ ծագումն ու պարզ-ընկերական կապերը չմոռանալով, երբեք չմեծամտանալով, միեւնույն ժամանակ՝ կրեատիվ, նոր մոտեցումների առաջ միշտ բաց լինելու հատկանիշների օգնությամբ :

Վերջերս Մարգարիտա Սիմոնյանը մի շարք ռուսական հեղինակավոր պարբերականների հարցումներով ճանաչվել էր Ռուսաստանի մեդիաոլորտի ամենազդեցիկ հինգ կանանցից մեկը, նրա անունը անցած տարվա բոլոր հրապարակումներում նշվել է 802 անգամ: Նա 32 տարեկան է: Շուտով նա ռուսական NTV հեռուստաալիքի եթերում Թինա Կանդելակիի հետ, որը նույնպես հայկական արմատներ ունի, վարելու է ուղիղ հեռարձակվող «Երկաթե տիկնայք» հաղորդումը: Նրա շուրջը ամեն օր ստեղծվում են բազմաթիվ ասեկոսեներ ու բամբասանքներ, մշտապես աշխարհիկ խոսակցությունների բում է, նա գեղեցիկ է, խելացի, նոր գաղափարներով լի, քաղքենի չէ եւ մշտապես փայլում է իր ուղիղ, ոչ կեղծավոր խոսքով, պրոբլեմն արմատից ցույց տալու հատկությամբ, որի պատճառով շատ թշնամիներ է վաստակում: Դեղին մամուլն ամեն օր հորինում է, թե ում հետ է նա երեւում այս կամ այն աշխարհիկ երեկոյին, ո՞ւմ հետ է քնում: Բանն այնտեղ էր հասել, որ Կրասնոդարում բնակվող նրա հայրը պարբերաբար զանգում է ու հարցնում այս կամ այն բամբասանքի մասին, թե ճի՞շտ է արդյոք այս կամ այն զզվելի լուրը: Բանն այնտեղ հասավ, որ վերջերս բոլոր այդ բամբասանքներին պատասխանեց ինքը՝ թագուհի Մարգոն, հանրահայտ մի պարբերականով դիմելով նաեւ հորը, թե՝ գիշերը հանգիստ քնիր, հայրիկ, մի հավատա բամբասանքներին, դրանք բոլորը սուտ են, պարզապես բոլորին հանգիստ չի տալիս Մարգարիտա Սիմոնյանի անձը:

### Քիմ Քարդաշյանը՝ սեքս խորհրդանիշ



*Քիմ Քարդաշյան*

ԱՄՆ-ում հայտնի հեռուստաաստղ, ամերիկյան ալիքներից մեկի «Իրապատում» շոուի վարող Քիմ Քարդաշյանն աշխարհում ամենաշատ լուսաբանված կանանցից մեկն է, որի անվան շուրջը անբաժան են սկանդալները, ասեկոսեները, անհավանական «իրապատումները»:

Ըստ ArmenianPulse.com կայքի՝ Քիմը ծնվել է Լոս Անջելեսում, հայ հոր՝ փաստաբան Ռոբերտ Քարդաշյանի եւ հոլանդական ու շոտլանդական ծագմամբ մոր ընտանիքում, որտեղ, ի դեպ, պահպանվել են հայկական ավանդույթներն ու տոների նշումը, քանի որ նրա հորական պապն ու տատը Արեւմտյան Հայաստանից են ԱՄՆ գաղթել ու փոխանցել են իրենց որդուն էրգրից բերված ողջ հայկականը: Հոր պնդմամբ՝ Քիմն ու իր երկու քույրերը, ինչպես նաեւ եղբայրը երբեք չեն հանել իրենց ազգանվան հայկական վերջավորությունը, իսկ Քիմը բազմաթիվ անգամ նշել է, որ հպարտանում է իր հայկական ծագմամբ: Նա հայերեն չգիտե եւ Հայաստանում չի եղել, սակայն երկուսն էլ կուզենար, անգամ իր կառուցվածքը համարում է տիպիկ հայկական: Նրա ռեալիթի-շոուն մեծ ժողովրդականություն է վայելում ԱՄՆ-ում, եւ եղել է, որ այդ շոուի ժամանակ հիշել է իր հայկական արմատների մասին: Քիմը նաեւ անտարբեր չէ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի վերաբերյալ:

Հայաստանի լրատվամիջոցները հաճախ են ամենահակասական լուրեր գրում Քարդաշյանի մասին, ու անկախ նրա հանդեպ հակասական վերաբերմունքից՝ փաստ է, որ նա այժմ աշխարհում ամենահայտնի հայ կանանցից մեկն է, նրա սիրավեպերի, հագուստների ու կոշիկների մասին հաճույքով են ընթերցում ամենահայտնի պարբերականների էջերում, նրա սիրավեպերի պատմությունները՝ ինտիմ մանրամասներով ողջ աշխարհի անհոգ մասի սեփականությունն են դառնում հաճախ, եւ ընդհանրապես՝ հաճախ նրա մասին տեղեկությունները խախտում են տրամաբանության բոլոր սահմանները: Գրում են նրա ներքնաշորերի, նրա մերկության, բարեմասնությունների, անճաշակ կամ ճաշակով զարդեղենի եւ այլնի մասին: Օրինակ՝ որ Քիմի հարսանիքը Քրիս Համփրիսի հետ արժեցել 10 մլն դոլար, կամ՝ նրա մատանին 2 մլն դոլար արժողության է: Նա այժմ հղի է եւ պատրաստվում է երեխա ունենալ, սա եւս նորություն չէ, քանի որ հղիության բոլոր շրջանների մասին եւս աշխարհի ու մեր լրատվամիջոցները մանրամասն պատմում են:

Քիմ Քարդաշյանին վերջերս անդրադարձել էր BBC-ն՝ նշելով, որ հանահայտ ռեալիթի-շոուվուհին 32 տարեկան է, հայկական ծագում ունի, նրա լուսանկարները մի շարք հանրահայտ ամսագրերի շապիկներին են, սակայն ակնարկվել է նաեւ հայերի ոչ միանշանակ վերաբերմունքի մասին՝ հանդեպ Քիմը, քանի որ հայկական սփյուռքի ու Հայաստանի հայուհիներից ոչ բոլորն են ցանկանում նմանվել նրան, անգամ երբեմն ձայներ են հնչում, որ նա չներկայացնի Հայաստանը, չնայած՝ երիտասարդությունն այս տեսակ նախապաշարումներից ի վերջո ազատ է: Մանավանդ՝ Քիմ Քարդաշյանն աստղի իր համբավն օգտագործելով՝ հայերի խնդիրները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության հարցը առիթի դեպքում բարձրացնում է: Հայկական մամուլն էլ հրապարակել էր մեկ տարի առաջ Քիմի միկրոբլոգում արած նրա գրառումը. «Եկեք միանանք եւ հիշենք 1,5 մլն մարդկանց, ովքեր զոհվել են Հայոց ցեղասպանության ժամանակ»: Քարդաշյանը նաեւ սիրիահայերին օգնություն ցուցաբերելու կոչ է արել:

**Պատրաստեց Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**


ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ

## Միացեք ինտերնետին եւ ստացեք նվեր՝ 1500 ՄԲ եւ 1500 րոպե

Մարտի 8-ից ապրիլի 7-ը բաժանորդագրվելով «ՄՏՍ կոնեկտ», «Home-Zone Turbo», «Office-Zone» կամ «Internet Express» հետվճարային ինտերնետային սակագնային պլաններից մեկին առնվազն մեկ տարով, կարելի է ստանալ տոնական նվեր՝ 1500 ՄԲ ինտերնետ եւ 1500 րոպե ներցանցային խոսելաժամանակ՝ բաժանորդի նախընտրած կանխավճարային քարտի համար:

Բաժանորդագրվելիս կտրամադրվի տոնական փաթեթի հատուկ նույնականացուցիչ: Նվեր փաթեթն ակտիվացնելու համար անհրաժեշտ է կանխավճարային համարից ուղարկել հետեւյալ հրահանգը.

*888*ինտերնետային քարտի համարը*նույնականացուցիչ#

Օրինակ՝ *888*093298888*123456#

Ի դեպ, «ՄՏՍ կոնեկտ» սակագնային պլաններից մեկին բաժանորդագրվելիս «ՄՏՍ կոնեկտ E353» USB մոդեմը տրամադրվում է անվճար:

Ծանոթություն

Տոնական փաթեթն ակտիվացնելիս՝ ինտերնետի եւ ներցանցային խոսելաժամանակի ընթացիկ այլ փաթեթները զրոյանում են:

Տոնական փաթեթը կարելի է ակտիվացնել ինտերնետային սակագնային պլանին բաժանորդագրվելուց 15 օր անց՝ 45 օրվա ընթացքում:

Տոնական փաթեթը հնարավոր է սպառել ակտիվացման օրվանից սկսած 90 օրվա ընթացքում:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:


## ՀԱՄԵՐԳ

**Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ**

**Տիգրան Մանսուրյան**
**Թավջութակի կոնցերտ թիվ 4**
**«Աբել, ո՞ւր է եղբայրդ»** *(հայաստանյան պրեմիերա)*

**Բրամս**
**Սիմֆոնիա թիվ 1**

Մենակատար՝
**Յան Ֆոգլեր** *Թավջութակ (Գերմանիա)*

Դիրիժոր՝
**Էդուարդ Թոփչյան**
Գեղ. ղեկավար եւ գլխ. դիրիժոր
Տեղի կունենա մարտի 9-ին, ժամը 19.00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

Դասընթացները կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի անունով (ձեւ 1, լրացվում է տեղում).

2) 3x4 չափի 2 լուսանկար.

3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը 2 օրինակ.

4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը 2 օրինակ.

5) անձնագրի պատճենը 2 օրինակ.

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը) 2 օրինակ.

7) «Անելիք բանկ» ՓԲԸ-ում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 11800033791500 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների իսկությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տեւողությունը 15 օր է՝ 90 ժամյա տեւողությամբ: Վերապատրաստման դասընթացի արժեքը 55.000 ՀՀ դրամ է՝ առանց ճաշի եւ սուրճի ընդմիջման:

Դասընթացները կվարեն տնօրենների վերապատրաստման մեծ փորձ ունեցող մասնագետները:

Դիմումներն ընդունվում են ս.թ. մարտի 11-ից 25-ը:

Դասընթացները սկսվելու են ապրիլի 1-ից եւ ավարտվելու են ապրիլի 15-ին (ներառյալ շաբաթ եւ կիրակի օրերը):

*Երեւան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2-րդ հարկ, 215 սենյակ, ամեն օր՝ ժամը 900-ից 1630-ն: Հարցերի դեպքում զանգահարել՝ 010-59-70-29, կամ գրել հետեւյալ էլ. փոստով՝ intercoop85@mail.ru.*

w w w . a z g . a m

ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112 ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 7.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: